# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1117-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**_____2025 թվականի N - Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1117-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու կարգը սահմանելու մասին» N 1117-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
———— -ի N — -Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
հուլիսի 21-ի N 1117-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Բուսասանիտարիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված իմաստը:
3. Սույն կարգով գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու գործընթացն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):
4. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող պեստիցիդները և ագրոքիմիկատները պարտադիր ենթակա են պետական գրանցման, բացառությամբ Օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված պեստիցիդների և ագրոքիմիկատների:
5. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման համար ներկայացվում է հայտ՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով՝ լիազոր մարմնի

պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ կցելով սույն կարգով սահմանված փաստաթղթերը։

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր ընթացակարգով, իսկ օտարերկրյա պետություններումարտադրված պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով։
7. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդները ընդհանուր ընթացակարգով գրանցման համար լիազոր մարմնին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերը.

- պեստիցիդի առևտրային անվանումը, ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, համագործիչ և օժանդակ նյութերը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը).
- պեստիցիդի ծախսի նորման, օգտագործման ժամկետը, եղանակը և առանձնահատկությունները, մշակվող օբյեկտը, վնասակար օրգանիզմը, մշակումների քանակը, սպասման ժամկետը, կիրառման սահմանափակումները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.
- պեստիցիդի հիգիենիկ նորմատիվները (մարդու օրգանիզմում օրվա թույլատրելի սահմանային չափաբաժինը, հողում թույլատրելի սահմանային քանակը, ջրամբարների ջրում թույլատրելի սահմանային քանակը, աշխատանքային գոտում օդում թույլատրելի սահմանային քանակը, մթնոլորտային օդում թույլատրելի քանակը և թույլատրելի առավելագույն մակարդակը սննդամթերքում).
- պեստիցիդի քիմիական փորձաքննության, ազդող նյութի մնացորդային քանակների որոշման մեթոդիկաները, պեստիցիդների ազդող նյութի բյուրեղային տիպօրինակը (ստանդարտը), եթե տվյալ նյութի փորձաքննության մեթոդիկաներով բյուրեղային տիպօրինակն անհրաժեշտ է.
- պեստիցիդի թունունակությունը ոչ նպատակային տեսակների համար (ձկներ, թռչուններ, մեղուներ, հողի միկրոօրգանիզմներ և այլն).
- պեստիցիդի ազդեցությունը վերարտադրողականության վրա.
- պեստիցիդի մուտագեն, ալերգիկ, ուռուցքածին և մաշկագրգիռ, տերատոգեն, գոնադատոքսիկ, սաղմնաթունային հատկությունները.
- պեստիցիդի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը.
- պեստիցիդի պիտակի նկարագիրը.
- տեղեկանք Հայաստանի Հանրապետությունում դրանց երկու տարվա անընդմեջ դաշտային և լաբորատոր փորձարկման արդյունքների մասին, որը տրամադրում են քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտով սահմանված գիտական

և կրթական կազմակերպությունները՝ քաղաքականություն մշակող լիազոր մարմնի հաստատած ձևին համապատասխան։

8. Օտարերկրյա պետություններում արտադրված պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

- ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն կարգի 7-րդ կետի 1-9-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում պեստիցիդի ընդգրկվածության վերաբերյալ.

- պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն կարգի 7-րդ կետի 1-4-րդ և 9-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում պեստիցիդի ընդգրկվածության վերաբերյալ, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետում նշված դեպքի։

9. Եվրոպական միության երկրներում արտադրված ֆերոմոնների, բույսերի աճի խթանիչների և կենսաբանական ծագման պեստիցիդների պարզեցված ընթացակարգով գրանցման համար գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում պեստիցիդի ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունը չի պահանջվում։
10. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ագրոքիմիկատները ընդհանուր ընթացակարգով գրանցման համար լիազոր մարմնին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերը.

- ագրոքիմիկատի առևտրային անվանումը, սննդատարրերը, դրանց տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը).
- ագրոքիմիկատի կիրառման եղանակները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.
- աշխատանքային գոտում օդում ագրոքիմիկատի թույլատրելի սահմանային քանակը.
- ագրոքիմիկատի սննդատարրերի քիմիական փորձաքննության մեթոդիկան.
- ագրոքիմիկատի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը, բացառությամբ Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով

սահմանված դեպքի.
- ագրոքիմիկատի պիտակի նկարագիրը։

11. Օտարերկրյա պետություններում արտադրված, փորձարկված և գործածության մեջ գտնվող ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

- ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն կարգի 10-րդ կետով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում ագրոքիմիկատի ընդգրկվածության վերաբերյալ.

- պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն կարգի 10-րդ կետի 1-3-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում ագրոքիմիկատի ընդգրկվածության վերաբերյալ, բացառությամբ սույն կարգի 12-րդ կետում նշված դեպքի։

12. Եվրոպական միության երկրներում արտադրված ագրոքիմիկատների պարզեցված ընթացակարգով գրանցման համար գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում ագրոքիմիկատի ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունը չի պահանջվում։
13. Պեստիցիդների և ագրոքիմիկատների պարզեցված ընթացակարգով գրանցման դեպքերն են՝

- եթե պեստիցիդը արտադրված կամ գրանցված է Եվրոպական միության անդամ պետություններում կամ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում կամ Իսլանդիայում կամ Նորվեգիայում կամ Շվեյցարիայում կամ Կանադայում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կամ Ռուսաստանի Դաշնությունում կամ Ճապոնիայում կամ Վրաստանում կամ Կորեայի Հանրապետությունում.
- եթե ագրոքիմիկատը արտադրված կամ գրանցված է Եվրոպական միության անդամ պետություններում կամ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում կամ Իսլանդիայում կամ Նորվեգիայում կամ Շվեյցարիայում կամ Կանադայում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կամ Ռուսաստանի Դաշնությունում կամ Ճապոնիայում կամ Վրաստանում կամ Կորեայի Հանրապետությունում.

14. Բացի սույն կարգի 13-րդ կետով սահմանված դեպքերից, մյուս բոլոր դեպքերում կիրառվում է ընդհանուր ընթացակարգով գրանցումը։
15. Լիազոր մարմինը պեստիցիդների և ագրոքիմիկատների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց

հետո՝ քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

16. Հայտը ստանալուց հետո լիազոր մարմինն ուսումնասիրում է հայտը և հայտին կից փաստաթղթերը: Հայտում կամ հայտին կից փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքերում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, հայտատուին գրավոր առաջարկում է 10 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները և կրկին ներկայացնել հայտի շտկված փաթեթը: Այս դեպքում սույն կարգի 15-րդ կետում նշված ժամկետները երկարաձգվում են 10 աշխատանքային օրով:
17. Լիազոր մարմինը հայտը և հայտին կից փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո ընդունում է որոշում՝ տվյալ պեստիցիդը կամ ագրոքիմիկատը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին և 3 աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով պատշաճորեն տեղեկացնում է հայտատուին, իսկ գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի գրանցման փաթեթը, այդ թվում՝ պեստիցիդի ազդող նյութի բյուրեղային տիպօրինակը վերադարձնում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:
18. Պեստիցիդը կամ ագրոքիմիկատը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու մասին որոշում կայացնելու դեպքում լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին տրամադրում է սույն կարգի N 1 ձևով հաստատված պեստիցիդի գրանցման կամ N 2 ձևով հաստատված ագրոքիմիկատի գրանցման վկայական:
19. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են հինգ տարի ժամկետով, իսկ ագրոքիմիկատները՝ տասը տարի ժամկետով:
20. Լիազոր մարմինը պեստիցիդի գրանցումը մերժում է, եթե՝

- պեստիցիդի ազդող նյութը կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 17-ի N 293-Ն որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում կամ դրանց քանակությունը գերազանցում է ցանկով սահմանված թույլատրելի պարունակությունը.
- հայտատուն սույն կարգի 16-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները.
- պեստիցիդը գրանցված չէ արտադրող երկրում, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքի հիման վրա գրանցվող պեստիցիդների:

21. Լիազոր մարմինը ագրոքիմիկատի գրանցումը մերժում է, եթե՝

- ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 17-ի N 293-Ն որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում կամ դրանց քանակությունը գերազանցում է ցանկով սահմանված թույլատրելի պարունակությունը.
- հայտատուն սույն կարգի 16-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները:

22. Լիազոր մարմնի՝ պեստիցիդների կամ ագրոքիմիկատների գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:
23. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները ենթակա են վերագրանցման, եթե՝

- գրանցման ժամկետը լրանալուց առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել.
- պեստիցիդի ազդող, համագործիչ, օժանդակ նյութերի բաղադրությունը և դրանց տոկոսային հարաբերությունը չեն փոփոխվել:

24. Պեստիցիդների վերագրանցումը կատարվում է այն դեպքում, երբ վերագրանցման պահին պեստիցիդը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքի հիման վրա գրանցված պեստիցիդների:
25. Հայաստանի Հանրապետությունում ագրոքիմիկատները ենթակա են վերագրանցման, եթե՝

- գրանցման ժամկետը լրանալուց առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել.
- ագրոքիմիկատի սննդատարրերի կազմը և դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը չեն փոփոխվել:

26. Ագրոքիմիկատների վերագրանցումը կատարվում է այն դեպքում, երբ վերագրանցման պահին ագրոքիմիկատը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ սույն կարգի 12-րդ կետով սահմանված դեպքի հիման վրա գրանցված ագրոքիմիկատների:
27. Պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդների և ագրոքիմիկատների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն կարգով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված պեստիցիդների և ագրոքիմիկատների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:
28. Պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցումից հանվում են, եթե՝

- լրացել է գրանցման ժամկետը, սակայն թույլատրվում է դրանց իրացումը կամ օգտագործումը կամ արտահանումը մինչև պիտանիության ժամկետի ավարտը.
- գրանցման վկայական ստացած անձը ներկայացրել է գրանցումից

հանելու հայտ.

- պեստիցիդի ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից և ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառվել է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.
- գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում հայտնաբերվել են կեղծ տեղեկություններ կամ անհամապատասխանություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին.
- առկա են պեստիցիդի կամ ագրոքիմիկատի գրանցումը անվավեր ճանաչելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված այլ հիմքեր։

29. Պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցումից հանելու դեպքում լիազոր մարմինն այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով պատշաճորեն տեղեկացնում է տվյալ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի գրանցման վկայական ստացած իրավաբանական կամ ֆիզիկական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը։

ՁԵՎ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ՊԵՍՏԻՑԻԴԻ ԳՐԱՆՑՄԱՆ

N _____

Սույն վկայագիրը տրվում է

_____

(արտադրողի անվանումը, իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու

երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը)

_____-ին

Գրանցման ներկայացնողը

_____

(իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, գտնվելու վայրը, հասցեն)

Համաձայն Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի

_____ _____20___ թ. N _____ հրամանի

_____

(պեստիցիդի առևտրային անվանումը, ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում)

պեստիցիդը գրանցված և ընդգրկված է Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում N -ի ներքո:

_____20___ թ.

վկայական տալու ամսաթիվը

_____20____ թ.

ուժի մեջ է մինչև

Հայաստանի Հանրապետության _____

սննդամթերքի անվտանգության (ստորագրությունը)

տեսչական մարմնի ղեկավար

Կ. Տ.

ՁԵՎ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏԻ ԳՐԱՆՑՄԱՆ

N _____

Սույն վկայագիրը տրվում է
_____

(արտադրողի անվանումը, իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը)

_____-ին

Գրանցման ներկայացնողը
_____

(իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, գտնվելու վայրը, հասցեն)

Համաձայն Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի

_____ _____20___ թ. N _____ հրամանի
_____

(ագրոքիմիկատի առևտրային անվանումը, սննդատարրերը, սննդատարրերի քանակությունը պատրաստուկի մեջ, պատրաստուկային ձևը)

ագրոքիմիկատը գրանցված և ընդգրկված է Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում N -ի ներքո:

_____20___ թ.

վկայական տալու ամսաթիվը

_____20____ թ.

ուժի մեջ է մինչև

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

_____

(ստորագրությունը)

**Կ. Տ.**

»